տանքներ իրականացնելիս իրավախախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ նշանակել վարչական տույժեր՝ իր իրավասության սահմաններում,

գ) դիմել քաղաքաշինական գործունեության լիցենզավորման իրավասու մարմին՝ քաղաքաշինության բնագավառում աշխատանքներ իրականացնելիս իրավախախտում թույլ տված սուբյեկտների համապատասխան լիցենզիաների գործողության կասեցման կամ դրանք ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ առաջարկությամբ,

դ) հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններ՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար,

ե) պարտադիր կատարման համար տալ հրահանգ կամ ցուցում՝ քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով:

Ընթացիկ ստուգումների արդյունքում կայացված որոշումը 7-օրյա ժամկետում տրվում է ՀՀ քաղաքաշինական գլխավոր տեսուչին՝ հաստատման, որից հետո հաստատված որոշման պատճենը 7-օրյա ժամկետում ուղարկվում է համապատասխան մարզպետին (Երևանի քաղաքապետին):

Ըստ անհրաժեշտության ստուգումները անցկացվում են քաղաքաշինական պետական տեսչության և մարզպետների (Երևանում՝ քաղաքապետի) կողմից:

Քաղաքաշինական պետական տեսչությունը կարող է ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնել մարզպետարաններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, կառուցվող և շահագործվող շենքերում ու շինություններում՝ վթարային և մարդկանց ու շրջակա միջավայրի անվտանգությանն սպառնացող իրավիճակների դեպքում, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների, հասարակական կազմակերպությունների, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության լիցենզավորման իրավասու մարմնի, այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումների (դիմումների) հիման վրա:

Ըստ անհրաժեշտության ստուգումները չեն կարող դուրս գալ ստուգման պատճառ հանդիսացող խնդրին առնչվող հարցերի շրջանակներից և կարող են տևել մեկ օրից ոչ ավելի: Ստուգման արդյունքում երեք օրինակից կազմվում է արձանագրություն: Ստուգվող սուբյեկտին և համապատասխան մարզպետին (Երևանի քաղաքապետին) տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվություն է սահմանվում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: Իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել տուգանք, քաղաքաշինական գործունեության լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում: Տուգանքը նշանակվում է **20.000-ից 400.000 դրամի** սահմաններում՝ կախված արարքից:

Տուգանքները նշանակվում են քաղաքաշինական պետական տեսչության կողմից՝ համապատասխան տարածքային բաժինների պետերի որոշմամբ, որը հաստատում է ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության պետը:

Լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման վերաբերյալ որոշումը ընդունում է լիզենզավորող մարմինը՝ քաղաքաշինական պետական տեսչության միջնորդագրի հիման վրա:

Ֆիզիկական անձանց նկատմամբ կարող են կիրառվել վարչական պատասխանատվության միջոցներ, մասնավորապես, օգտագործվող հողամասի վրա ինքնակամ շենքեր և շինություններ կառուցելու համար կարող է նշանակվել տուգանք՝ **200.000 դրամի** չափով, իսկ պետական և համայնքային սեփականության հողերում ինքնակամ շինարարություն իրականացնելու համար՝ **400.000 դրամի** չափով:

Պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: Դատարանի կողմից տուգանքի գանձումն անհիմն ճանաչվելու դեպքում այն վերադարձվում է:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում քաղաքաշինության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնելու կարգի, վերահսկողության իրականացման ձևերի, քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվության և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Մայիս, 2005

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության խնդիրներն են քաղաքաշինական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը, աշխատանքներ իրականացնող սուբյեկտների կողմից քաղաքաշինական նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների ապահովումը և այլն:

Քաղաքաշինության ոլորտում պետական վերահսկողությունն իրականացնում են ՀՀ Քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությունը և մարզպետները՝ համապատասխան մարզերում, Երևանի քաղաքապետը՝ Երևան քաղաքում:

Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողությունը տարածվում է քաղաքաշինական գործունեության բոլոր օբյեկտների վրա:

Քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ են Հայաստանի Հանրապետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետությունները և միջազգային կազմակերպությունները, որոնք կարող են հանդես գալ որպես քաղաքաշինական գործունեության մասնակիցներ (կառուցապատողներ, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներ, շինարարություն իրականացնողներ, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողներ և այլն):

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողությունն իրականացվում է տեսչական, պլանային, ընթացիկ և ըստ անհրաժեշտության ստուգումների միջոցով:

Տեսչական ստուգումներն անցկացվում են քաղաքաշինական պետական տեսչության կողմից՝ մարզպետարանների քաղաքաշինական բաժիններում (վարչություններում), ինչպես նաև մարզային ենթակայության ձեռնարկություններում և կազմակերպություններում:

Տեսչական ստուգման առաջադրանքը կազմում է ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչը՝ քաղաքաշինության նախարարի հրամանի հիման վրա:

Տեսչական ստուգման արդյունքում կազմվում է արձանագրություն, որի հիման ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչը 10-օրյա ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) արձանագրությունն ընդունել ի գիտություն,

բ) դիմել ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված պաշտոնատար անձանց իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելու մասին համապատասխան մարզպետին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) հաղորդում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ,

գ) քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, նշանակել վարչական տույժեր,

դ) հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններ՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար,

ե) պարտադիր կատարման համար տալ հրահանգ կամ ցուցում՝ քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով:

Պլանային ստուգումներն անցկացվում են մարզպետների (Երևանի քաղաքապետի) որոշմամբ ստեղծված հանձնաժողովների կողմից՝ քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեությունը վերահսկելու նպատակով:

Պլանային ստուգումներն անցկացվում են յուրաքանչյուր համայնքում՝ տարեկան մեկ անգամ, մարզպետի կողմից հաստատված ժամկետացանկին և ստուգման առաջադրանքին համապատասխան:

Պլանային ստուգումները կարող են տևել ոչ ավելի, քան երկու օր: Լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտություն առաջանալիս՝ ստուգումների ժամկետը մարզպետի որոշմամբ կարող է երկարաձգվել ևս երկու օրով՝ դրա մասին տեղեկացնելով համայնքի ղեկավարին:

Պլանային ստուգման արդյունքում կազմվում է արձանագրություն և ներկայացվում մարզպետին, որի հիման վրա մարզպետը 10-օրյա ժամկետում որոշում է՝

ա) արձանագրությունն ընդունել ի գիտություն,

բ) դիմել համապատասխան համայնքի ղեկավարին՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված պաշտոնատար անձանց իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելու վերաբերյալ առաջարկությամբ,

գ) դիմել քաղաքաշինության պետական տեսչությունն՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ վարչական տույժեր նշանակելու վերաբերյալ առաջարկությամբ,

դ) հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններ՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտում թույլ տված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար,

ե) պարտադիր կատարման համար տալ հրահանգ կամ ցուցում՝ քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով,

զ) համայնքների ղեկավարների՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները գանգատարկել դատարանում:

Պլանային ստուգման արդյունքում կազմված արձանագրության պատճենը 7-օրյա ժամկետում տրվում է ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի պետին:

Ընթացիկ ստուգումներն անցկացվում են շինարարության օբյեկտներում՝ աշխատանքներ իրականացնող լիցենզավորված սուբյեկտների գործունեությունը վերահսկելու, իրականացվող շինարարության որակը, քաղաքաշինական փաստաթղթերի, իրավական ակտերի և նորմատիվ տեխնիկական պահանջներին դրա համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Ընթացիկ ստուգումներն անցկացվում են ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժինների պետերի կողմից տրված ստուգման առաջադրանքին և հանձնարարաթերթերին համապատասխան:

Ընթացիկ ստուգման արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն: Խախտումները վերացնելու ցուցումները կցվում են արձանագրությանը: Արձանագրության հիման վրա քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի պետը 10-օրյա ժամկետում որոշում է՝

ա) արձանագրությունն ընդունել ի գիտություն,

բ) քաղաքաշինության բնագավառում աշխա-